ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 455-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ,ԿԱՊԻ,ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով,ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին,2-րդ և 7-րդ կետերով,հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ավագանու 25.06.2025թ.-ի N50-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի 11 հասցեում գտնվող 2.13605 հա հողամասը ուղղակի վաճառքով օտարել «Մ.Վ.Ա. էլեկտրո» ՍՊԸ-ին՝ ընդլայնման եղանակով, հիմք ընդունելով 17.06.2025թ. դիմումը և Ճամբարակ համայնքի ավագանու 25.06.2025թ. թիվ 50-Ա որոշումը:

2.«Մ.Վ.Ա. էլեկտրո» ՍՊԸ- ը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե 900185065134 հաշվեհամարին որպես հողի արժեք վճարել 7000000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ:

3.Սահմանել,որ վերը նշված 05-009-0264-0008 կադաստրային ծածկագրով մեկ միավոր 2. 13605 հա հողամասի չափագրման,պետական գրանցման և վաճառքի հետ կապված ծախսերն իրականացվեն գնորդի հաշվին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2025 թ. հունիսի 27
ք.Ճամբարակ